

Հաստատված է

ԵՊՀ Գիտական խորհրդի

2007 թ. հունիսի 28-ի թիվ 5 նիստում:



Ս. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ  
«29» 06 2007թ.

## ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետև՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանումն է, որը գործում է ՀՀ օրենսդրությանը, ԵՊՀ-ի և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.2. Կենտրոնը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել ԵՊՀ-ի ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ-ի ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Կենտրոնն ունի իր անվամբ կնիք և ձևաթուղթ:

### 2. Կենտրոնի խնդիրները

2.1. Կենտրոնի հիմնական խնդիրն է՝ իրականացնել ուսումնասիրություններ քաղաքակրթական և մշակութային ոլորտներում, վերլուծել մշակութային համակարգերի կողմից գործալ քաղաքակրթական ազդեցությունների ադապտացման առանձնահատկությունները:

### 3. Կենտրոնի գործառույթները

3.1. Իրականացնել ուսումնասիրվող բնագավառներում գիտահետազոտական ծրագրեր (ըստ յուրաքանչյուր ծրագրի համար նախապես սահմանված տևողության):

3.2. Համագործակցել այլ գիտահետազոտական կենտրոնների և համալսարանների հետ աշխատանքների արդյունավետ կատարման, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակով:

3.3. Նախապատրաստել հրապարակման համար Կենտրոնի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքները, ուսումնասիրությունները, վերլուծությունները և այլ նյութերը:

3.4. Կազմակերպել Կենտրոնի գիտահետազոտական աշխատանքների ծրագրի թեմաներին համապատասխան ուղղվածություն ունեցող գիտաժողովներ, սեմինարներ և քննարկումներ:

#### 4. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

4.1. Կենտրոնի աշխատանքները համակարգվում են գիտության գծով ԵՊՀ պրոռեկտորի կողմից:

Կենտրոնի աշխատանքները ղեկավարում և կազմակերպում է Կենտրոնի տնօրենը:

4.2. Կենտրոնի տնօրենը

▪ Կենտրոնի խորհրդի հետ մշակում է գիտահետազոտական աշխատանքների ծրագիրը:

▪ կազմակերպում է համագործակցությունը այլ գիտահետազոտական հիմնարկների հետ:

▪ իր լիազորությունների սահմաններում հանձնարարականներ է տալիս է Կենտրոնի աշխատակիցներին:

▪ կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի գործավարությունը:

▪ պատասխանատվություն է կրում Կենտրոնի աշխատանքների որակի, խնդիրների և գործառույթների պատշաճ կատարման համար:

4.3. Կենտրոնի տնօրենը ընդունվում է աշխատանքի և աշխատանքից ազատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

4.4. Կենտրոնի հաստիքացուցակը հաստատում է ԵՊՀ-ի ռեկտորը:

#### 5. Կենտրոնի խորհուրդը

5.1. Կենտրոնի խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

5.1.1. Քննարկում է Կենտրոնի տնօրենի կողմից առաջարկած գիտահետազոտական աշխատանքների ծրագրերը և ներկայացնում է առաջարկություններ գիտական թեմաների և հետազոտությունների ուղղությունների վերաբերյալ:

5.1.2. Քննարկում է առաջարկություններ Կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների ծրագրերի վերաբերյալ:

5.1.3. Երաշխավորում է հրատարակման համար Կենտրոնի ներկայացրած գիտահետազոտական աշխատանքները:

Կենտրոնի խորհուրդը կազմվում է համապատասխան մասնագետներից, որոնց ցուցակը հաստատում է ԵՊՀ ռեկտորը Կենտրոնի տնօրենի առաջարկությամբ: